ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 05.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/132

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ.Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական
բժշկական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Արմբիլդ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցում, շինանյութի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ.-ի թիվ 01.1/26-1/13136-2019 գրությամբ «Արմբիլդ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 31.07.2019թ. թիվ 09/1403 /V02.4/[14759]-19/ գրության հիման վրա, 06.08.2019թ. «Արմբիլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 06.08.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 14.08.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 14.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.09.2019թ.-ին:

2. <u>«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը 31.07.2019թ. թիվ 09/1403 /V02.4/[14759]-19/ գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««2019 թվականի մարտի 01-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի՝ www.armeps.am կայքի միջոցով համալսարանի կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Արմբիլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Գնահատող հանձնաժողովը 2019 թվականի հուլիսի 1-ի թիվ 10 որոշմամբ «Արմբիլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ճանաչել է ընտրված մասնակից N

7, 14, 21, 36, 39, 59, 61-րդ չափաբաժինների մասով, սակայն հրաժարվել է պայմանագիր կնքելուց՝ սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը:

Վերը նշված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 01.07.2019թ.-ից մինչև 08.07.2019թ.-ը: Անգործության ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ 09.07.2019թ.-ին, ընտրված մասնակցին հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու մասին՝ կցելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Գնահատող հանձնաժողովի կողմից գնումների մասին ՀՀ օրենսդրության շրջանակներում կատարված գործողությունների ամբողջ ժամանակահատվածում «Արմբիլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից պաշտոնական որևէ գրություն, առարկություն, հարցադրում կամ պարզաբանում չի ներկայացվել:

Ընկերությունը քարտուղարի կողմից 2019 թվականի հուլիսի 22-ին ծանուցվել է /էլլկտրոնային փոստի միջոցով և հեռախոսազանգով/ այն մասին, որ պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո 10 տասը աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև սույն թվականի հուլիսի 23-ը ներառյալ, պայմանագիր չստորագրելու, Պատվիրատուին պայմանագրի ապահովում չներկայացնելու դեպքում, կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից և պայմանագրի կնքումից հրաժարվելու դեպքում, կազմակերպության տվյալները կտրամադրվել լիազորված մարմնին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36- րդ հոդվածի 3-րդ մասով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգի N 7, 14, 21, 36, 39, 59, 61-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչված «Արմբիլդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացրել պայմանագրի ապահովումը, գնահատող հանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 25-ի թիվ 11 որոշմամբ Ընկերությունը զրկվել է պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Արմբիլդ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Արմբիլդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 09.08.2019թ. գրությամբ դիմել է «Արմբիլդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ.-ի թիվ 01.1/26-1/13136-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/132 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից համալսարանի կարիքների համար շինանյութի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Արմբիլդ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 01.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 7-րդ, 14-րդ, 21-րդ, 36-րդ, 39-րդ, 59-րդ և 61-րդ չափաբաժնների մասով ընտրված/հաղթող/ մասնակից ճանաչել «Արմբիլդ» ՍՊԸ-ին և պայմանագիր կնքելու

նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 01.07.2019թ. մինչև 08.09.07.2019թ.-ը: Անգործության ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ 09.07.2019թ.-ին «Արմբիլդ» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու մասին՝ կցելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայամանագրի նախագիծը:

Մասնակիցը պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ.-ի թիվ 01.1/26-1/13136-2019 գրությամբ «Արմբիլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի

քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2019/7-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.07.2019թ.-ին կայացած նիստի թիվ 10 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 7-րդ, 14-րդ, 21-րդ, 36-րդ, 39-րդ, 59-րդ և 61-րդ չափաբաժնների մասով ընտրված/հաղթող/ մասնակից ճանաչել «Արմբիլդ» ՍՊԸ-ին:

Մասնակցի հետ պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 01.07.2019թ. մինչև 08.07.2019թ.-ը: Անգործության ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ 09.07.2019թ.-ին «Արմբիլդ» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել է պայմանագիր կնքելու մասին՝ կցվել է պայմանագիր կնքելու առաջարկը և պայամանագրի նախագիծը, սակայն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում, այն է՝ ծանուցման հաջորդող 10

աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արմբիլդ» ՍՊԸ-ն, որպես ընտրված/հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և/կամ պայմանագրի ապահովումը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.08.2019թ.-ի թիվ 01.1/26-1/13136-2019 գրությամբ «Արմբիլդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Արմբիլդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**